ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ «ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ» ԹԵՄԱՅՈՎ

23.08.2021 12:13

Հարգելի՛ փաստաբաններ,

Տեղեկացնում ենք, որ ՀՀ փաստաբանների պալատը Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի և «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ ***2021թ. սեպտեմբերի 18-ին և 19-ին (գիշերակացով) Աղվերանում*** կազմակերպելու է վերապատրաստման դասընթաց ***«Փախստականների պաշտպանության արդի հիմնահարցեր»*** թեմայով:

Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է սույն հաղորդագրությունը ստանալուց հետո ***մինչև 25.08.2021թ. ժամը*** **17:00-ն** գրանցվել՝ training.coordinator@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելով մասնակցությունը հաստատող նամակ և հստակ նշելով դասընթացի թեման, Ձեր անունը, ազգանունը և արտոնագրի համարը:

Գործընկերներ կազմակերպությունների պայմանների հաշվառմամբ՝ դասընթացին ***կարող են մասնակցել միայն տվյալ ոլորտում (փախստականների, ապաստան հայցողների գործերով) որոշակի փորձառություն ունեցող փաստաբանները***, որոնք ցանկանում են կատարելագործել իրենց գիտելիքները: Նշվածով պայմանավորված գրանցման համար անհրաժեշտ է ներկայացնել նաև այդպիսի գործերով նախկինում մասնակցությունը հիմնավորող փաստական տվյալներ, ինչպիսին կարող է լինել դատական գործի համար (Դատական տեղեկատվական համակարգի (DataLex) միջոցով մասնակցությունը ստուգելու համար), վարչական վարույթի արձանագրություն կամ որոշում (անհատական տվյալների պաշտպանությամբ), կամ որևէ այլ հավաստի փաստական տվյալ:

Տեղեկացնում ենք, որ դասընթացին մասնակիցների քանակը սահմանափակված է, և վերջինիս կարող են մասնակցել միայն առաջին 5 (հինգ) գրանցված փաստաբանները, որոնք ներկայացրել են նշված ոլորտում փորձառությունը հիմնավորող փաստական տվյալներ:

Տվյալ դասընթացին Ձեր մասնակցությունը կհաշվարկվի պարտադիր վերապատրաստման 12 (տասներկու) ակադեմիական ժամ:

Դասընթացի շրջանակներում քննարկվելու են «Ապաստանի ընթացակարգերի և իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցների հասանելիության վերաբերյալ 2021 թվականի օրենսդրական փոփոխությունները», «Ապացուցման բեռը և ապացուցման շեմը ապաստանի ընթացակարգում. ՄԻԵԴ պրակտիկան», «Ապաստանի տրամադրման վարույթում ի հայտ եկող ընթացակարգային խնդիրներ», «Ապաքաղաքացիության հիմնահարցեր» և այլ թեմաներ, կատարվելու են գործնական վարժություններ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })